

# ԴԱՄԱՍԿՈՍԻ ՀԱՅԵՐԸ 1920-40ԱԿԱՆՆԵՐՈՒՆ (Ակնարկ)

Նորա Արիսեան  
noraarissian deputy@gmail.com

## ՄՈՒՏՔ

Հակառակ իրենց փոքր թիվին, Սուրիոյ մայրաքաղաքին մէջ կայք հաստատած, Յեղասպանութենէն մազապուրծ հայերուն պատումը կարեւոր մէկ բաղկացուցիչն է սուրիահայութեան պատմութեան:

Դամասկոսի մէջ հայերու մասին տուեալներ եւ արձանագրութիւններ գոյութիւն ունին հայկական աղբիւրներու մէջ, որոնք լոյս տեսած են դամասկահայ հաստատութիւններու, մշակութային, մարզական թէ այլ միութիւններու յրելեակական գրքոյկներու թէ հատորներու<sup>1</sup>, ինչպէս նաեւ *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքի* եւ հայկական մամուլին մէջ<sup>2</sup>: Կան նաեւ որոշ արխիւային նիւթեր, ինչպէս՝ Դամասկոսի Ազգային Առաջնորդարանի 1866-1915 շրջանի տոմարները:

Հիմնուելով տարբեր աղբիւրներու վրայ, այս զեկուցումը կը շօշափէ հայերու ներկայութիւնը Դամասկոսի մէջ:

Դամասկոսի հայ գաղութի մասին արաբ սուրիական պատմագրութեան եւ հրատարակութիւններուն մէջ առաջին յիշատակումները հաւանաբար կը կատարուին 1879ին լոյս տեսած Նաաման Քասաթլիի գիրքին<sup>3</sup> մէջ, ուր Դամասկոսի եկեղեցիներուն շարքին կը յիշատակուի հայ առաքելական Ս. Սարգիս Եկեղեցին, որոշ մանրամասնութիւններ կը տրուին նաեւ անոր հրկիզման մասին (1870ականներուն)<sup>4</sup>: Գիրքը կը յիշատակէ նաեւ հայ կաթողիկէ եկեղեցին, կը նկարագրէ զայն իբրեւ փոքր եկեղեցի, որ կը գտնուի լազարիստներու մատուոյն արեւելեան կողմը, հիմնուած բուրի մը տեղը, 1860էն ետք Կրիկորիոս (Գրիգոր Լուսաւորիչ) սուրբին անունով<sup>5</sup>:

Նոյն գիրքին մէջ ակնարկութիւն կայ նաեւ Դամասկոսի հայկական վարժարանին մասին. ան կը յիշուի իբրեւ «հին հայերու» վարժարան, ուր կը դասաւանդուի հայերէն լեզուն, ունի մէկ ուսուցիչ եւ 25 աշակերտ: Գիրքը կ'ակնարկէ նաեւ Ս. Սարգիս Եկեղեցւոյ շրջակայքը գործող հայկական վարժարանի մը, որ յատկացուած էր տղոց ուսուցման:

Ուշագրաւ է նախաեղեռնեան ժամանակաշրջանի դամասկահայ նշանաւոր դէմք՝ գրող, թղթակից, թարգմանիչ Ատիպ Իսհաքի պարագան: Ան՝ հայ կաթողիկէ ընտանիքի զաւակ, ծնած է Դամասկոս 1856ին, ապա անցած Լիբանան ու մահացած 1885ին, Պէյրութ:

Իսհաք կը համարուի ԺԹ. դարու արաբական վերածնունդի (*Ալ Նահպա*) ռահվիրայ. իր գրութիւններուն մէջ յստակ էր յեղափոխութեան եւ բարենորոգման շունչը, որոնց ջատագովն էր ան<sup>6</sup>:

Հակառակ փաստաթուղթերու սակաւութեան, կարելի է հաստատել որ քսաներորդ դարու առաջին տասնամեակին, գաղութին մէջ գործած է ուսանողական միութիւն, որ բաղկացած է բժշկական վարժարանի ուսանողներէն, որոնք կը պատկանէին Դամասկոսի ՀՅԴ ենթակոմիտէի մը:

Ուսումնասիրելով 1866-1915 շրջանի Դամասկոսի Ազգային Առաջնորդարանի տոմարները, կը պարզուի թէ Տիգրանակերտէն, Խարբերդէն եւ Այնթապէն մագապուրծ Դամասկոս հասած մեծաթիւ հայերէն ոմանք մահացած են Դամասկոսի մէջ: Նկատելի է, մանաւանդ, որ երեխայ եւ պատանի տարիքի մահացութեան թիւերը բարձր են: Անդին, Կեսարիայէն, Խարբերդէն, Ուրֆայէն մօտաւորապէս 10,000 հայեր հաստատուած են Դամասկոս Քատամ, Մեզզէ եւ Պապ Շարքի թաղամասերուն մէջ:

Հայոց Յեղասպանութեան շրջանին Դամասկոս դարձած է հայ աքսորականներու կեդրոնացման կայք ուր հաւաքուած են 30 հազար հայեր: Ասոնցմէ շատեր Չինադադարին անցած են Կիլիկիա:

Յետ-ցեղասպանութեան ժամանակահատուածին Դամասկոսը կը դառնայ կեդրոն՝ Յեղասպանութենէն վերապրող հայերուն: Այնուհետեւ, յաջորդող տասնամեակներուն, դամասկահայութիւնը կը կազմակերպուի, կը յառաջացնէ կենսագործունէութեան իր իրայատուկ հոլովոյթը: Միաժամանակ, սակայն, 1920ականներու անկայուն վիճակին պատճառով շուրջ 15 հազար դամասկահայեր կը գաղթեն Լիբանան եւ այլ երկիրներ:

Ըստ դամասկահայ Յարութիւն Նաշալեանի յուշերուն՝ *«1914-1918 Առաջին Համաշխարհային Պատերազմին 100,000է աւելի հայեր փարագրուեցան եւ քշուեցան դէպի Պաղեստին ու Հաւորանի անապատը: Ասոնց մեծամասնութիւնը թշուառութենէն եւ փարափոխիկ հիւանդութիւններէ մեռած է: Վերապրող հայերէն շուրջ 35-40,000 հոգի Դամասկոս կը բերուին՝ ֆրանսական կառավարութեան օժանդակութեամբ Կիլիկիա փոխադրելու համար: Ասոնցմէ 15,000 հայեր բնակութիւն հաստատելով կը մնան Դամասկոս»*<sup>7</sup>: Այդ թուականներուն արդէն կը գործէր չքաւոր ընտանիքներու նպաստելու նպատակով 1890էն ի վեր Դամասկոսի մէջ կեանքի կոչուած Ս. Սարգիս Եկեղեցւոյ աղքատախնամ յանձնախումբը:

### ՅԵՏ-ԵՂԵՌՆԵԱՆ ՀԱՆԳՐՈՒԱՆ

1 Դեկտեմբեր 1918ին Դամասկոսի մէջ կը կազմուի Ազգային Միութիւնը, որ աջակից կը դառնայ զանազան շրջաններէ Դամասկոս հասած հայերուն: Ազգային Միութեան Դամասկոսի կեդրոնը օժանդակութիւն կը ստանար տեղական կառավարութենէն եւ անգլիական ու ֆրանսական իշխանութիւններէն:

Ըստ երեւոյթին Եգիպտոսէն<sup>8</sup> նաեւ նիւթական օժանդակութիւն ստանալով Հաւորան հաւաքուած 4000 հայ գաղթականներ Մեզզէ շրջանը կը հաստատուին, օրուան կուսակալ Ալաէտտինի միջնորդութեամբ<sup>9</sup>:

1920ականներուն դամասկահայերը մասնակից կը դառնան սուրիական տեղական պետական իրադարձութիւններուն: 9 Մայիս 1919ին, Դամասկոսի քաղաքապետարանին մէջ Իշխան Ֆէյսալի գլխաւորութեամբ, Սուրիայէն, Լիբանանէն, Պաղեստինէն ժամանած անձնաւորութիւններու ներկայութեամբ կազմակերպուած հաւաքին ներկայ կ'ըլլայ նաեւ Սուրիոյ եւ արաբական շրջաններուն մէջ հայ գաղթականներու հոգեւոր ներկայացուցիչը Աստուր Սարգիսեան: Ան, յանուն հայութեան իր ելոյթին մէջ զօրակցութիւն կը յայտնէ արաբներուն, եւ ակնարկելով Օսմանեան ջարդերուն, շնորհակալութիւն կը յայտնէ արաբներուն՝ հայ գաղթականներու հանդէպ ազնիւ մօտեցումին եւ վերաբերումին, հաւաստելով թէ՛ «*արաբներու անունը հայկական պատմութեան մէջ ոսկէ տառերով պիտի գրուի*»<sup>10</sup>:

Իշխան Ֆէյսալ, իր պատասխան ելոյթին մէջ հաստատած է որ ինք պիտի շարունակէ իր աշխատանքները այս ուղղութեամբ, կարելորելով փոքրամասնութիւններու պահանջները:

Նշելի է որ թագաւորին հանդէպ դամասկահայերու զօրակցութիւնը այլապէս ալ դրսեւորուած է: Այսպէս, Դամասկոսի հոգեւոր հայրերը (որոնց մաս կազմած են Դամասկոսի հայ առաքելական առաջնորդն Աստուր Սարգիսեան ու հայ կաթողիկէ առաջնորդը՝ Ժըրժոս) յատուկ հրաւերով մը, 8 Մարտ 1920ին ներկայացած են Դամասկոսի քաղաքապետարան եւ յայտնած են հայութեան զօրակցութիւնը իշխան Ֆէյսալին:

Դամասկոս կայք հաստատած հայեր, 1922-1925 ժամանակաշրջանին սկսած են տեղաւորուիլ զանազան թաղամասեր, ինչպէս՝ Պապ Շարքիի թաղամասը, զոր վարձակալելով ֆրանսական կառավարութենէն, տակաւ սեփականատէրերը դարձան այդ հողատարածքներուն<sup>11</sup>:

Դամասկոսի մէջ գաղթական հայերը ապաստանած էին Պապ Թումայի Ուստա Կարապետի եւ Պապ Շարքիի Խաչերի (Խաչեր Կէօնճեան) քեմիները, ուր փոքրիկ մանկապարտէզ մը հիմնած էին:

Սուրիական տեղական մամուլը եւս անդրադարձած է Դամասկոսի մէջ հայերու հաստատման մասին: Դամասկոս լոյս տեսնող *ԱլՄուքթապաս* օրաթերթը, 3 Յունուար 1923ին կը հաղորդէ որ 1920ականներուն սկիզբը 7800 գաղթականներ հասած են Դամասկոս եւ հաստատուած հոն: Իսկ 28 Դեկտեմբեր 1923ին, թերթը կը յայտնէ թէ ըստ վերջին մարդահամարին, Դամասկոսի մէջ հայերու թիւը կը հաշուէ մօտ երեսուն հազար:

Դամասկոս տեղաւորուող հայութիւնը կը սկսի կազմաւորման գործընթացին. քանականներուն սկիզբը կը կազմաւորուին ու գործել կը սկսին հայկական միութիւններու գաղութային մասնաճիւղեր, ինչպէս՝ Սուրիահայ Երիտասարդաց Միութիւնը (1922), մարզական եւ բարեսիրական միութիւններ ՀԲԸՄ (1913), ՀՄՄ (1921), ՀՄԸՄ (1922), ՍՕԽ (1927)<sup>12</sup>:

Կը հիմնուին նաեւ վարժարաններ: Ի տարբերութիւն 1894ին հիմնուած միակ վարժարանին, 1925-27ին, կը գործեն վեց վարժարաններ, 1200

աշակերտներով: 1930ին կը գործեն երեք վարժարաններ. Ս. Թարգմանչաց (հիմն. 1898)<sup>13</sup>, Հայ Աւետարանական Երկսեռ Դպրոց (հիմն. 1925), Ազգային Միացեալ Վարժարան (հիմն. 1929): Աւելի ետք, 1954ին, հիմնուած է ՀԲԸՄ Կիւլապի Կիւլպենկեան, իսկ 1965ին՝ Հայ Կաթողիկէ Ալիշան Վարժարանը:

Քաղաքական ոլորտէն ներս, կարելի է հաստատել որ խորհրդարանի մակարդակով որոշ շփումներ կատարուած են գաղութին հետ:

11 Յունուար 1939ին, խորհրդարանի արտահերթ նստաշրջանի 6րդ նիստին, որ տեղի կ'ունենայ Ֆարէս Խուրիի նախագահութեամբ, կ'ընթերցուի Դամասկոսի հայերու անունով ներկայացուած ստորագրահաւաք-նամակ մը, ուր դամասկահայերը իրենց զօրակցութիւնը կը յայտնեն Սուրիոյ խորհրդարանի որոշումներուն, ընդգծելով որ սուրիահայութիւնը կը զօրակցի Սուրիոյ անկախութեան: Փոխադարձաբար, Հալէպի եւ Դամասկոսի շարք մը երեսփոխաններ դրական կ'արտայայտուին հայերուն մասին, դրուատելով անոնց կեցուածքը՝ Սուրիոյ ազգային խնդիրներուն, եւ մասնակցութիւնը՝ երկրի զարգացման: Խորհրդարանի նախագահը կ'առաջարկէ արձանագրութեան մէջ նշել երեսփոխաններու գնահատանքը հայ «եղբայրներու» նկատմամբ՝ անոնց հաւատարիմ կեցուածքին համար, յանուն երկրի ազատութեան:

Այս հանգրուանին դամասկահայութեան մօտ որոշ քաղաքական աշխուժութիւն կ'արձանագրուի: 1943ի խորհրդարանական ընտրութիւններուն ազգային ցանկերը կը յաղթեն, Ֆարէս Խուրիի նախագահութեամբ կը կազմուի երեսփոխաններու խորհուրդը, 17 Օգոստոս 1943ի ընտրութիւններուն կ'ընտրուի Նազարէթ Եագուպեան (հայ առաքելական)<sup>14</sup>:

Մէկ նստաշրջանի համար՝ 1943-1947, ան երեսփոխան ընտրուած է Ազգային Ցանկէն: Եագուպեան անդամ էր ազգային տնտեսութեան յանձնաժողովի եւ բողոքագիրերու յանձնաժողովի:

1947ին դամասկահայերը կրկին առիթ կ'ունենան խորհրդարանական ներկայացուցչութեան: Սեպտեմբեր 1947ի խորհրդարանական ընտրութիւններով 4 հայ երեսփոխաններ մաս կը կազմեն նոր խորհրդարանին:

Դամասկահայ փաստաբան Ֆրէտ Արսլանեան (հայ առաքելական) մաս կը կազմէ խորհրդարանի արտաքին հարցերու եւ սահմանադրական յանձնաժողովներուն, հուսկ՝ դատական յանձնաժողովին: Ան կարեւոր նպաստ ունեցած է թոշակառուներու օրէնքի սահմանումին<sup>15</sup>:

Դամասկահայ բարձրաստիճան գինուորականներէն պէտք է յիշել Հրանդ Մալոյեանը<sup>16</sup>, որ 1945ին ստանձած էր Սուրիոյ ոստիկանութեան հրամանատարութիւնը, Արամ Գարամանուկեանը, որ կը համարուի 1946ի անկախութենէն ետք սուրիական բանակի հիմանդիրներէն<sup>17</sup> եւ դամասկայ զօրավար Ալպէր Քիլէճեանը:

Նոյն շրջանի դամասկահայերու թուաքանակի մասին տուեալներ կարելի է քաղել 1951ի պաշտօնական մարդահամարէն: Ըստ այդ

մարդահամարին, Դամասկոսի արուարձանները բնակություն հաստատած են 61 առաքելական եւ 106 կաթողիկէ հայեր, իսկ Դամասկոս քաղաք՝ 17,473 առաքելական եւ 2305 կաթողիկէ հայեր: Ըստ նոյն մարդահամարին, սուրիահայութեան ընդհանուր թիւը կը հաշուէր 109,005 առաքելական եւ 19,219 կաթողիկէ հայեր:

Միութենական կեանքը կ'աշխուժանայ 1950ականներուն: 1952ին, կը հիմնուի Համազգային Մշակութային Միութեան մասնաճիւղ մը:

1957ին Դամասկոսի հայերը կը հաշուեն 7500, որոնցմէ 1500ը՝ հայ կաթողիկէ եւ հայ աւետարանական, մինչ 250-300 ընտանիքներ գաղթած են Հայրենիք<sup>18</sup>: Դամասկահայ մշակութային կեանքի դէմքերէն կարելի է յիշել բանաստեղծ Արմէն Անուշ Մարաշլեանը (1907-1958), գրող Յարութին Նաշալեանը, Միհրան Տէր Ստեփանեանը, Անդրանիկ Նաճարեանը (Անդրանիկ Արարատ) եւն.:

## ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

<sup>1</sup> Դամասկոսի Միացեալ Վարժարանի Քսանհինգամեայ Յօրեւեան 1929-1954, Հալէպ, 1956:

<sup>2</sup> Լուիսիկ Երիքեան, Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը, 1958, Ա. Տարի, Դամասկոս-Սուրիա, Տպգր.՝ Տպ. Երիքեան, 1958:

<sup>3</sup> الروضة الغناء في دمشق الفجاء- (Մշտադալար մարգագետին լայնարձակ Դամասկոսի մէջ), Դամասկոս, Ա. տիպ՝ 1879, Բ. տիպ՝ 2004:

<sup>4</sup> Եկեղեցւոյ գմբէթը այդ ժամանակ եղած է փայտաշէն եւ հրկիզումէն ետք է որ դարձած է քարեղէն:

<sup>5</sup> Հայ Կաթողիկէ եկեղեցին հին մատուռ մըն է, այժմ անգործածելի՝ Պապ Թումայի նեղ փողոցին մէջ: Սակայն Կաթողիկէ համայնքը ներկայիս ունի փառաւոր եկեղեցի, Պապ Թումայի հրապարակը նայող դիրքի վրայ, ուր կայ նաեւ Փարոս Վարժարանը:

<sup>6</sup> عيسى فتوح, أديب اسحق باعث النهضة القومية, (Իսա Ֆաթթուհ, Ատիպ Իսհաք՝ ազգային

վերածնունդի շարժառիթը), Դամասկոս, 1976:

<sup>7</sup> Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը, էջ 30-35:

<sup>8</sup> Հաւանաբար նաեւ ՀԲԸՄիութեան կողմէ:

<sup>9</sup> Այնտեղ կը բացուի դպրոց, ոմն՝ Յարութին Յարութինեանի կողմէ:

<sup>10</sup> جريدة العاصمة: (ԱլԱսիմա երկշաբաթաթերթ, Դամասկոս, թիւ 24, 9 Մայիս 1919):

<sup>11</sup> «Հայերու թաղ» յորջորջուած Ս. Սարգիս Եկեղեցւոյ շրջակայքը գտնուող Պապ Շարքիի թաղամասին մէկ հատուածը (ուր ապաստանած էին հայ գաղթականները), Ապրիլ 2015ին պաշտօնապէս անուանուեցաւ «Հայ ալ Արման»՝ հայոց թաղ:

<sup>12</sup> Թէքէեան Մշակութային Միութեան մասնաճիւղի արտօնագիրը ստացուած է 1971ին, իսկ մասնաճիւղը գործելը սկսած է 1975ին:

<sup>13</sup> Ազգ. Թարգմանչաց Վարժարանը հիմնովին կառուցուեցաւ Դամասկահայ բարերար Գեղամ Օհանեանի կողմէ:

- 
- <sup>14</sup> Նազարեթ Եազուպեան (Մարաշ, 1885-Դամասկոս, 1972): Փրկուելով ջարդէն հաստատուած է Դամասկոս: Աշխատած է շինարարութեան ասպարէզին մէջ: Դամասկոսի մէջ կառուցած է մզկիթներ, Դամասկոսի Համալսարանը եւ այլ պետական շէնքեր ու ճանապարհներ: Յիշարժան է ֆրանսացիներու ոմբակոծումէն ետք խորհրդարանի շէնքի վերակառուցման իր աշխատանքը:
- <sup>15</sup> Արսլանեան ծնած է Այնթապ 1912ին, յաճախած Դամասկոսի «Ֆրէր» վարժարանը: Իբրեւ իրաւաբան, 1944ին մասնկացած է Արաբ Փաստաբաններու Ա. Խորհրդաժողովին, վարած է միութեան քարտուղարի պաշտօնը, մաս կազմած միութեան ամսագիրի խմբագրակազմին: Մահացած է 2001ին:
- <sup>16</sup> Հրանդ պէյ Մալոյեան (1896-1978), զինուորական եւ քաղաքական գործիչ, որպէս հարիւրապետ ծառայած է ֆրանսական բանակին մէջ: Պաշտօնավարած է սուրիական ոստիկանութեան ծառայութեան մէջ, ստացած է վաշտապետի աստիճան, հասնելով մինչեւ ոստիկանութեան հրամանատարի պաշտօնին:
- <sup>17</sup> Գարամանուկեան ծնած է Այնթապ 1910ին: 1930ին անցած է ֆրանսական բանակ, 1934ին աւարտած է Դամասկոսի Զինուորական Ուսումնարանը, ծառայած է Հալէպի հրետանիի ստորաբաժանումին: Ֆրանսա գործուողուած է հրետանային սպառազինութեան եւ սպայակոյտի սպաներու դասընթացքներու համար: Սուրիական բանակին մէջ ստանձնած է բարձրաստիճան պաշտօններ. 1949-1950՝ սպայակոյտի անդամ էր, իսկ 1949-57՝ հրետանային ուժերու ընդհանուր հրամանատար, նշանակուած է վաշտի ընդհանուր հրամանատար: Մասնակցած է Պաղեստինի պատերազմին, որպէս Սուրիոյ հրետանային զինուած ուժի հրամանատար: 1957ին նշանակուած է Ուաշինկթընի մէջ Սուրիոյ դեսպանատան զինուորական կցորդ, մահացած է Նիւ Եորք, 1996ին:
- <sup>18</sup> Յարութին Նաշալեան, «Դամասկոսի Հայ Բնակչութիւնը», *Դամասկահայ Ամենուն Տարեգիրքը*, էջ 35:

### The Armenians of Damascus (Summary)

Nora Arissian  
noraarissiandeputy@gmail.com

Notwithstanding its small size, the Damascus Armenian community constitutes a historical part of the Syrian Armenian community. These Armenians settled in Damascus after the Genocide and revived the old community there.

Based on diverse sources, archival materials, Prelacy registers, Arabic newspapers, and Syrian Arab memoirs and accounts, the paper sheds light on Damascus as an Armenian center and its history in the post-genocide era.

The paper highlights the growth and formation of the community, its schools, voluntary organizations, and churches, as well as its socio-cultural growth in the last one hundred years. It underlines the role a number of prominent Damascene Armenians had in various aspects of Syrian politics, society, economy and culture. Furthermore, the paper examines the relations of the community with local cultural circles and assesses the Damascene Armenian community from the local Arab perspective.